ԹՎԻՆԻՆԳ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

AM/14/ENP/ST/15

Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – փուլ II

ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Վիճակագրական տեղեկատվության տարածման համակարգի վերաբերյալ

Գործողություն 1.6. Կայքի բարելավում II

Առաքելությունն իրականացրել է

Պրն Յեսպեր Էլեմոուսե Յենսենը Դանիայի վիճակագրությունից

2017թ. հունվարի 17-20-ը

Վերջնական տարբերակ

ՀՀ ազգային
վիճակագրության
ծառայություն

STATISTICS
DENMARK

<u>Փորձագետի կոնտակտային տվյալներ</u>

Յեսպեր Էլեմոուսե Յենսեն
Դանիայի վիճակագրություն
Սեյրոգադե 11
DK-2100 Կոպենհագեն Ø
Դանիա
Հեռ. +45 3917 3244
Էլ-փոստ. jej@dst.dk

Բովանդակություն

1. Ընդհանուր մեկնաբանություններ .....**Fejl! Bogmærke er ikke defineret.**
2. Գնահատում և արդյունքներ 4
3. Եզրակացություններ և առաջարկություններ..... 9
Հավելված 1. Տեխնիկական առաջադրանք .....**Fejl! Bogmærke er ikke defineret.**2
Հավելված 2. Առաքելության ծրագիր .....**Fejl! Bogmærke er ikke defineret.**4
Հավելված 3. Հանդիպումներին մասնակցած անձինք 15
Հավելված 4. Պատկերագրման առաջարկություններ..... 16

Հապավումների ցանկ

API (ՀԾԻ)	Հավելվածի ծրագրավորման ինտերֆեյս
CMS(ԲԿՀ)	Բովանդակության կառավարման համակարգ
CoP (ՓՕ)	Փորձառության օրենսգիրք. Եվրոստատ
ԵՄ	Եվրոպական միություն
ԱՎՀ	Ազգային վիճակագրական համակարգ (պաշտոնական վիճակագրության)
ՀՀ ԱՎԾ	Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն
ՈԱՇ/QAF	Որակի ապահովման շրջանակ
ԸՎԳ/SVG	Ընդլայնելի վեկտորային գրաֆիկներ

1. Ընդհանուր մեկնաբանություններ

Այս առաքելության զեկույցը պատրաստվել է «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – փուլ II» Թվինինգ ծրագրի շրջանակներում: Սա բաղադրիչ 1-ի ութերորդ գործողությունն էր, որի համար պլանավորված քայլերն իրականացվել են համաձայն ժամանակացույցի:

Առաքելության նպատակն էր.

- Քննարկել կայքի բարելավման, մասնավորապես՝ սպառողների համար դրա հարմարավետության և օգտագործելիության հարցեր
- Ընթացիկ ցանցային հարթակի գնահատում՝ ծրագրի շրջանակներում բարելավումների ներուժի առնչությամբ

ԱԵ փորձագետն իր երախտիքն է հայտնում բոլոր պաշտոնատար անձանց և անհատներին, ում հետ հանդիպել է: Փորձագետի Հայաստանում գտնվելու ընթացքում նշված անձանց կողմից ստացված աջակցությունը և արժեքավոր տեղեկատվությունը մեծապես հեշտացրել են նրա աշխատանքը: Սույն հաշվետվության մեջ տեղ գտած տեսակետները և դիտարկումները պատկանում են ԱԵ փորձագետին և որևէ կերպով չեն արտահայտում ԵՄ, ՀՀ ԱՎԾ կամ Դանիայի վիճակագրության տեսակետները:

Գործողությունը միտված էր վերահսկելու նույն փորձագետի կողմից 2016թ. օգոստոսի 30-ից սեպտեմբերի 2-ը իրականացված «Կայքի բարելավում I» 1.5 գործողության շրջանակներում կատարված աշխատանքը: Սեպտեմբերից ՀՀ ԱՎԾ աշխատակիցներն իրականացրել են Գործողություն 1.5-ի ընթացքում պլանավորված և առաջարկված աշխատանքները: ՀՀ ԱՎԾ-ն կազմել է սպասելիքների և հիմնահարցերի հստակ ցուցակ, որոնք պետք է քննարկվեն ի լրումն տեխնիկական առաջադրանքի: Ընդհանուր առմամբ բոլոր հարցերը քննարկվեցին և ՀՀ ԱՎԾ-ն առաքելության ընթացքում ավարտին հասցրեց մի շարք կարևոր տեխնիկական խնդիրներ: Կարևոր է ընդունել և գովասանքի արժանացնել ՀՀ ԱՎԾ SS աշխատակիցների աշխատանքային կարողությունները:

2. Գնահատում և արդյունքներ

Ինչպես նշվել է վերը, ՀՀ ԱՎԾ-ն նախապատրաստել էր հարցերի ցանկ, որոնք պետք էր քննարկել: Այս քննարկումների հետ մեկտեղ նրանց հետ միասին մենք կատարեցինք գործնական աշխատանք www.armstat.am և www.armstatbank.am կայքերում:

2.1 armstatbank.am –ում կատարված աշխատանքը

SS աշխատակիցները, որոնք զբաղվում են համակարգով, բարձրացրեցին մի շարք հիմնախնդիրներ և հարցեր www.armstatbank.am կայքի վերաբերյալ: 1.5 գործողության ընթացքում PX-Web ծրագիրը թարմացվել էր ամենավերջին հասանելի տարբերակով: 2017թ. առաջին կեսին սպասվում է, որ PX-Web-ի նոր տարբերակ է թողարկվելու Շվեդիայի վիճակագրության կողմից, որը հանդիսանում է այս ծրագրի հիմնական մշակողը: Առաջարկվում է, որ ՀՀ ԱՎԾ-ն թարմացնի PX-Web ծրագիրը, նոր տարբերակի հասանելի դառնալուն պես:

Աղյուսակների հերթականությունը

ՀՀ ԱՎԾ-ին առաջարկվել է, որպեսզի յուրաքանչյուր թեմատիկ ոլորտում աղյուսակները ներկայացվեն ըստ MATRIX-ի հիմնաբառի, քանի որ դրանով հնարավոր կլինի ապահովել աղյուսակների և՛ հայերեն և՛ անգլերեն լեզուներով նույն հերթականությամբ ներկայացնելը.

Կարճ հղում

Հայկական PX-Web տարբերակում կատարվել է փոփոխություն՝ ներկայացնելով կարճ հղումներ դեպի աղյուսակները: Փոփոխությունը հնարավոր է դարձնում կոնկրետ աղյուսակի համար հղում դնելը, ինչպես www.armstatbank.am/tablename: Համակարգը որպես աղյուսակի անվանում օգտագործում է հիմնական MATRIX-ի արժեքը: Հղումը միշտ սպառողներին կուղղորդի դեպի www.armstatbank.am -ի հայերեն տարբերակ:

PX-Map

Բաղադրիչի այլ գործողություններից մեկի ընթացքում, առաջարկվել է Armstatbank.am-ին ավելացնել PX-Map բաղադրիչ: PX-Map-ը PX ընտանիքի մասնիկ է: Սակայն PX-Map ծրագիրը Հայաստանում օգտագործելը ժամանակատար և ծանր է: Կան 3 հիմնական մարտահրավերներ, առաջինը PX-Map ծրագիրը www.armstatbank.am սերվերում տեղադրելն է: Երկրորդը Հայաստանի և վարչական միավորների (շրջանների/մարզերի) համապատասխան SVG քարտեզ ստանալն է և վերջապես, armstatbank.am-ում որոշ տվյալներ բացակայում են, ինչը ազդում է աշխարհագրական բաշխում կատարելու վրա: Ժամանակի առկայության դեպքում ես ավելի շատ փորձարկումներ կանեմ նախքան ամփոփիչ գործողությունը, որը ներկայում պլանավորված է 2017թ. հունիսին, սակայն այս պահին չգիտեմ թե դա որքան ժամանակ կպահանջի, կամ արդյոք հաջողությամբ կպսակվի թե ոչ:

2.2 armstat.am-ում կատարված աշխատանքը

ՀՀ ԱՎԾ-ի խնդրանքով www.armstat.am-ին ուղղված աշխատանքը վերաբերում էր հետևյալ հարցերին.

- Կայքի բարելավում
- Գլխավոր էջի կառուցվածքի փոփոխում
- Ընթացիկ վեբ հարթակի գնահատում կայքի բարելավման համար
- Կայքում տեղ գտած տեղեկատվության ներկայացում ըստ թեմաների
- Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների շարքերի թարմացում և ինտերակտիվ գրաֆիկների և քարտեզների ստեղծում
- Սպառողների հետ ինտերակտիվ հաղորդակցման համակարգի ստեղծում

Բոլոր հարցերին անդրադարձ կատարվեց, թեև դրանք քննարկվեցին առանց նշված հերթականությանը հետևելու: Ստորև կարող եք գտնել ամենակարևոր հիմնահարցերի կարճ նկարագրությունը:

2.2.1 Նոր նավիգացիոն կառուցվածքի պատրաստում (բարելավում և կառուցվածքի փոփոխում)

Ինչպես և համաձայնել էինք 1.5 գործողության ընթացքում, ՀՀ ԱՎԾ աշխատակիցները պատրաստել էին առաջարկություն www.armstat.am-ում նոր նավիգացիոն համակարգի ներդրման վերաբերյալ: Նոր նավիգացիոն կառուցվածքի ներդրման հիմնական նպատակն է ներկայցվում է ստրոն: Ներկայիս նավիգացիոն ճարտարապետությունը ծանրաբեռնված է և որոշ վերնագրեր կրկնվում են և հետևաբար նավիգացիոն հիերարխիան/ծառը սպառողների համար չկապակցված և շփոթեցնող է: Նավիգացիոն ծառն աճել է անկազմակերպ ձևով և տարբեր ուղղություններով, ինչպես դա արվում է ԱՎԻ կայքերի դպքում. ավելացվում են նոր կետեր, նոր և կարևոր վերնագրեր, ինչպես թելադրում են քաղաքական կամ կազմակերպության կարիքները, սակայն ժամանակ առ ժամանակ անհրաժեշտ է քայլ կատարել դեպի հետ և պարզեցնել այդ ծառը:

Նոր նավիգացիոն ծառ սահմանելու առաջարկությունները և գործընթացը ներկայացվել է սեպտեմբերին և ՀՀ ԱՎԾ-ն ներկայացրեց այս աշխատանքի արդյունքը, և մի շարք հարցեր դեռևս բաց էին և քննարկվեցին սույն գործողության ընթացքում:

Իմ տպավորությունն այնպիսին է, որ առաջարկվող կառուցվածքը հսկայական բարելավում է համեմատած հնի: Դա սպառողների համար կհեշտացնի որոնվող տեղեկատվության տեղը որոշելը: Շատ կարևոր է, որպեսզի ՀՀ ԱՎԾ-ն օգտագործի այս հնարավորությունը ուշադրությամբ դիտարկելու կայքում տեղ գտած յուրաքանչյուր տեղեկատվությունը, կամ դրա կարևորությունը որոշի սպառողների հիմնական խմբերի տեսանկյունից: Այն տեղեկատվությունը, որը սույն չափանիշներին չի համապատասխանում պետք է հնարավորինս տեղափոխել գլխավոր էջից: Վերնագրերը պետք է լինեն քիչ և պարզ, ցանկալի է նաև համադրելի այլ ԱՎԻ-ների կողմից կիրառվող վերնագրերի կառուցվածքի հետ:

2.2.2 Առաջարկություն armstat.am կայքի նոր գլխավոր էջի վերաբերյալ

ՀՀ ԱՎԾ-ն նաև նախապատրաստել է առաջարկ առ այն, թե ինչպիսի տեսք պետք է ունենա վերանայված գլխավոր էջը: Առաջարկը պետք է դիտարկվի որպես նվազագույն փոփոխություն www.armstat.am կայքում հեշտորեն փոփոխություններ կատարելու տեսանկյունից: Եթե անգամ դա արվի առանց նավիգացիոն կառուցվածքում փոփոխություններ կատարելու, այս փոփոխությունները շատ էական բարելավումներ կլինեն www.armstat.am կայքի համար:

Գլխավոր էջի հետ կապված հարցերը մանրամասն նկարագրված են գործողություն 1.5-ի հաշվետվության մեջ, բայց դրանիցից մի քանի կարևոր հարցեր կրկնվում են ստորև:

Որոնման դաշտը համարյա թաքնված է

Սպառողներն ակնկալում են գտնել որոնման դաշտը էջի վերևում այլ ոչ նավիգացիոն ծառի ներքևի աջ կողմում: Սա կարող է ուղղվել և հանդիսանում է առաջարկի մաս:

Ծանրաբեռնված և գործին չվերաբերող բովանդակություն

Ներկայիս աջ սյունյակը պարունակում է շատ տեղեկատվություն, որը շատ անհրաժեշտ չէ և տեղին է միայն շատ փոքր սպառողների խմբի համար: Այստեղ տեղ գտած ամբողջ տեղեկտվությունը գտնվում է նավիգացիոն ծառի երրորդ կամ չորրորդ մակարդակում:

Zip և acrobat գործիքների ներբեռնումը իրապես կապ չունի ՀՀ ԱՎԾ արտադրանքի հետ և այսօր այս գործիքներն ամբողջովին ինտեգրված են օպերացիոն համակարգերում և բրաուզերում: 10 և ավելի տարիներ առաջ էր, որ պետք է օգնեինք մեր սպառողներին նման հարցերում: Եթե ինչ-ինչ պատճառով այս գործիքները դեռևս անհրաժեշտ են, ապա դրանք պետք է թարմացվեն և տեղադրվեն help-ի տակ: Նոր նավիգացիոն ծառի համար առաջարկը լուծում է այս խնդիրը, բայց նույնիսկ առանց նոր կառուցվածքի սա հեշտությամբ կարելի է լուծել:

Նախկինում միգուցե հիմնավորված էր ներքևի աջ և ձախ սյունյակներում բովանդակության առկայությունը, սակայն այսօր՝ 2017 թվականին տեղեկատվության այս կտորները իրականում անհրաժեշտ չեն սպառողների որևէ մեծ զանգվածի համար, և ընդամենը շփոթեցնում են սպառողներին՝ կայքում տեղաշարժվելիս և դարձնում են կայքը պակաս գրավիչ՝ տեսազգայական տեսանկյունից: Այս մասերի բեռնաթափումը կօգնի և էապես կբարելավի կայքը՝ առանց որևէ իրական ծախսի:

Նույն վերնագրին պատկանող բովանդակություն

Ներկայում կան մի շարք տվյալների բազաներ և թողարկման օրացույցներ, սա շփոթեցնող է և զբաղեցնում է տեղ, որը կարող է օգտագործվել նորությունների/բովանդակության համար: ՀՀ ԱՎԾ-ի կողմից արված առաջարկության համաձայն այս մասը պետք է տեղափոխել առավել տրամաբանական տեղ, ինչի առնչությամբ նրանք ներկայացնում են նոր խորագրեր և գրաֆիկական պատկերներ:

2.2.3 Վերանայված www.armstat.am նախատիպը

Ստորև www.armstat.am-ի գլխավոր էջում ներկայացվող փոփոխությունների նկարն է, որը պատրաստվել է մինչ սույն գործողության վերջը՝ ուրբաթ 2017թ. հունվարին, և կողքին www.armstat.am-ի ներկայիս տարբերակն է:

Մշակված armastat.am-ի նախատիպն է	**Ընթացիկ armstat.am-ն է 2017թ. հունվարի 20-ի դրությամբ**



Ինչպես երևում է նկարից ՀՀ ԱՎԾ-ն մտածում է armstat.am կայքում դիզայնի (տեսնել և զգալ) փոփոխություններ կատարելու մասին: Ժամանակի ընթացքում անհրաժեշտ կլինեն նախագծի ռադիկալ փոփոխություններ: Բայց ներկա պահին առաջարկվող փոփոխությունները հաստատ կայքը ավելի գրավիչ կդարձնեն սպառողների համար և կտան դրան ավելի ժամանակակից «տեսազգայական» տեսք:

Ես առաջարկել եմ SS աշխատակիցներին խաղալ գույների հետ և փորձել գտնել այն հավասարակշռությունը, որը կայքը կդարձնի թեթև, և միևնույն ժամանակ ի հակակշիռ դրան շատ հեշտ ընթերցվող: Քանի որ հայոց այբուբենը խրթին է՝ տառերը մեծ են, և պարունակում է շատ էլեմենտներ, առաջանում են մի շարք խնդիրներ՝ կապված <B>, <I> կամ <UL> թեգերի ֆորմատավորման հետ: Տարբեր CSS-ների օգտագործման դիտարկումը հնարավոր է օգտակար լինի հայերենի, ռուսերենի և անգլերենի համար: Եթե լեզուները դեռ չունեն տարբեր CSS ֆայլեր, ապա դա հեշտությամբ կարելի է անել scripting-ով:

Նավիգացիա

Ներկայում չգիտենք, թե գլխավոր էջի տակ գտնվող էջերի նավիգացիան ինչպես կարող է իրականացվել: Հեշտ լուծման տարբերակ է անել այնպես, որ ներկայիս նավիգացիան պահպանվի՝ գլխավոր էջի տակ առանձին էջերը բացելիս: Սակայն SS վարչությունը փորձարկումներ կանի, որոշելու թե ինչ է հնարավոր և ինչ հնարավոր չէ կատարել:

Ընթացիկ ժամանակացույցը և կայքի փոփոխությունը

ՀՀ ԱՎԾ նախագահի հետ քննարկումներից հետո առաջարկվեց կայքի գլխավոր էջի փորձարկման/«նայիր և զգա», թարմացված գլխավոր էջի և նավիգացիոն կառուցվածքի պատրաստման նախնական ժամանակացույցը սահմանել մինչև ապրիլի վերջը: Առաջարկվում է, որպեսզի ՀՀ ԱՎԾ-ն ծանուցում դնի կայքում՝ տեղեկացնելով

սպառողներին, որ բովանդակությունը մի որոշ ժամանակ տեղափոխվելու է (հղումները և էջանիշերը, որոնց սպառողները սովոր են, կփոխվեն) նախքան փոփոխությունների վերջնական հրապարակումը: ՀՀ ԱՎԾ տեսանելիության համար մամուլի հաղորդագրությունը նույնպես ողջունելի է:

2.2.3 Կայքի բարելավման համար ընթացիկ վեբ հարթակի գնահատում

Որոշ քննարկումներից և փորձարկումներից հետո պարզ դարձավ, որ ՀՀ ԱՎԾ առաջարկությունը նոր գլխավոր էջի և վերանայված նավիգացիոն կառուցվածքի համար կարող է իրականացվել ընթացիկ CMS-ով: Սակայն մոտ ապագայում ՀՀ ԱՎԾ-ն պետք է ներկայացնի նավիգացիան ըստ թեմաների, ինչպես նաև ինտեգրացնի www.armstat.am և www.armstatbank.am կայքերը և կիրառի պատկերագրման և փոխազդեցության ժամանակակից գործիքներ: Սա հստակորեն ԱՆՀՆԱՐ կլինի իրականացնել ընթացիկ CMS-ով: 1.5 գործողության հաշվետվությունում սա նկարագրված է որպես անցում արտադրանքից դեպի թեմատիկ ուղղվածությամբ կայքի: Արտադրանքից թեմատիկ ուղղվածությամբ կայքին անցումը ընթացքի մեջ է կամ արդեն կատարվել է եվրոպական ԱՎԻ-ներում:

Ծրագիր

Բջջային հեռախոսների և iPad-ի տիպի սարքավորումների լայն կիրառումը ինտերնետում տեղեկատվություն որոնելու համար արձագանքող վեբ դիզայնի կարիք է առաջացնում. սա չի կարող իրականացվել ընթացիկ CMS-ով: Գրաֆիկներ և ինտերակտիվ գործիքներ կիրառելը պահանջում է, որպեսզի CMS-ը կարողանա ԱՎԻ-ից վերցված տվյալներ «մատուցել», սակայն սա հնարավոր չէ: Կարճ եզրակացությունն այն է, որպեսզի 1-2 տարուց նոր CMS ստեղծվի: CMS-ը փոփոխելը նաև նոր համակարգչային սարքավորումներ է պահանջում: SS բաժնին նաև անհրաժեշտ կլինի մուտքի հնարավորություն ունենալ դեպի սույն ծրագրային տարբերակները փորձարկող և զարգացնող միջավայր: Փորձարկման և մշակման միջավայրը պետք է նաև ներառի տեղակայման հատկանիշներ և տարբերակի հսկողություն: Ընթացիկ Win 2000-ի փորձարկման միջավայրը ավելի լավ է, քան ոչինչը, սակայն դա լրջորեն հնացած է, նույնը կարելի է ասել WIN 2008 սերվերի մասին, որով աշխատում է արտադրման տարբերակը:

Կարճ ասած ներկայիս համակարգչային սարքավորումները և ծրագրերը ՀՀ ԱՎԾ-ին կտանեն www.armstat.am-ի թարմացման այն տարբերակին, որը պլանավորվել է այս աշնան և ձմռան ընթացքում, բայց դա նույնպես բավարար չի լինի և ոչ այդքան հեռանկարային ՀՀ ԱՎԾ-ի համար: Դրա համար անհրաժեշտ է ամբողջովին նոր բան և սարքավորումների և ծրագրերի առնչությամբ:

2.2.4 Քննարկում և պատկերագրումներ

SS աշխատակիցները ՀՀ ԱՎԾ հետ որոշ նախնական քննարկումներ են իրականացրել կապված www.armstat.am կայքում տվյալների պատկերագրման համար: Գործողության ժամանակացույցը թույլ չտվեց սույն թեմայով մանրամասն քննարկում իրականացնել: Ընդհանուր առմամբ ՀՀ ԱՎԾ համար առաջընթացն այս ոլորտում պատկերագրման համար բաց աղբյուրի գործիքների և www.armstatbank.am-ից Json-Stat ձևաչափով վերցված տվյալների կոմբինացիայի օգտագործումն է՝ PX-Web լուծումների ՀԾԻ/API-ի կիրառմամբ:

Սույն մոտեցումը ենթադրում է, որ ՀՀ ԱՎԾ-ի SS աշխատակիցները լավ են պատկերացնում Java-Script, Json, և Json-Stat գործիքները:

Կարևոր է նշել, որ այս հմտությունները կարևորագույն նշանակության են տարածման մեջ ապագա աշխատանքների իրականացման և այլ գործակալությունների հետ տվյալների (վարչական) փոխանակման հարցում: Հետևաբար ՀՀ ԱՎԾ ղեկավարությունը պետք է խրախուսի աշխատակիցներին՝ սովորելու այս հմտությունները և պետք է նրանց բավարար աշխատանքային ժամանակ տրամադրի սույն հմտությունները գործնականում փորձարկելու և զարգացնելու համար:

Ներքում ներկայացված պատկերը ցույց է տալիս բնակչության բուրգը հիմնված հայկական մարդահամարի տվյալների վրա, դարձնող script –ը և PX-WEB API-ից եկող Json-Stat ֆայլը:



2.2.5 Սպառողների համար հաղորդակցության համակարգի ստեղծում

Գործողության ընթացքում քննարկվեց սպառողների համար ինետրակտիվ հաղորդակցության որևէ համակարգի ներդրման հարցը: ՀՀ ԱՎԾ-ն ունի տեսլական կամ ցանկություն ներդնելու այնպիսի համակարգ, որը սպառողների հետ առցանց երկխոսության հնարավորություն կընձեռի: Հնարավոր չէր նույնականացնել որևէ համապատասխան ծրագրային լուծում սրա համար, բայց հստակորեն առաջարկվել է որպեսզի ՀՀ ԱՎԾ-ն նախքան դա սկսելը քննարկի անհրաժեշտ ռեսուրսները, որոնք պահանջվում են իրական ժամանակում սպառողների հարցերին պատասխանելու համար: Ցանկացած լուծում պետք է ենթակա լինի «անջատվելու և միանալու» աշխատանքային ժամերից դուրս: Պակաս հավակնոտ նպատակ է պարզ վեբ ձևաթղթի կիրառումը այն սպառողների համար, ովքեր ուզում են հարցեր հղել ՀՀ ԱՎԾ-ին: Հարցաշարը կարող է դրվել HELP վերնագրի ներքո:

2.2.6 Սպառողների բավարավածության հետազոտության մասին իրազեկում

SS վարչությունը նախապատրաստել է հայտնվող պատուհան՝ խնդրելով սպառողներին լրացնել սպառողների բավարավածության հարցթերթը: Հայտնվող հիշեցումը դեռևս կայքում չի երևում: Առաջարկվում է, որպեսզի հայտնվող պատուհանի հնարավորություններն ընդլայնվեն, այնպես որ սպառողները կարողանան ընտրել *ոչ*, կամ ընտրել *հիշեցնել ավելի ուշ* տարբերակը, երբ հարցաթերթի պատուհանը հայտնվի: Սպառողներին չվանելու համար կարևոր է, որպեսզի պատուհանը ամեն անգամ

www.armstat.am կայք մուտք գործելուց չհայտնվի: Շատ հնարավորություններ կան նմանատիպ հայտնվող պատուհաններ մշակելու և շարունակաբար դրանք զարգացելու համար, բայց առաջարկվում է այն թողնել որքան հնարավոր է պարզ:

3. Եզրակացություններ և առաջարկություններ

Սույն գործողության համար եզրակացությունները և առաջարկությունները տրված են համաձայն հարթակի: 1.5 գործողությունից հետո արված այն բոլոր առաջարկությունները, որոնք դեռ չեն իրականացվել դեռևս տեղին են և պետք է դիտարկվեն:

3.1 www.armstat.am-ի վերաբերյալ եզրակացությունները և առաջարությունները

Նախորդ գործողությունից հետո արված աշխատանքը շատ օգտակար է եղել և իրականացվել է 1.5 գործողության վերաբերյալ զեկույցում նախանշված ժամանակացույցի համաձայն: Հետևաբար ՀՀ ԱՎԾ-ն պետք է մեկնարկի նոր նավիգացիոն կառուցվածք և վերմշակի www.armstat.am-ի գլխավոր էջը հնարավորինս շուտ: Ինչ վերաբերում է նոր կայքի ինչ-որ բացարձակ կատարյալ վիճակին, որտեղ լինելու է թեմատիկ ուղղվածությամբ և արձագանքող դիզայնով նավիգացիոն կառուցվածք, ՀՀ ԱՎԾ-ն դեռ երկար ճանապարհ ունի անցնելու:

Հաշվի առնելով ընթացիկ հնացած CMS-ից բխող սահմանափակումները՝ պլանավորված փոփոխությունները կապահովեն էական բարելավումներ սպառողների համար: Կարևոր է, որպեսզի թարմացման գործընթացն իրականացվի հնարավորինս շուտ, բայց արտաքին և ներքին շահառուները պետք է տեղեկացված լինեն գործընթացի մասին: Առաջարկվում է, որպեսզի սպառողներին ծանուցող մամուլի հաղորդագրություն պատրաստվի մեկ կամ երկու շաբաթ առաջ:

www.armstat.am կայքի հիմքում ընկած տեխնիկական հարթակը ինովացիոն էր և վերջին ճիչ էր այն ժամանակվա համար: Սակայն այսօր այն հստակորեն այլևս կայուն չէ և պետք է փոխարինվի կարճաժամկետ ապագայում: Հետևաբար շատ կարևոր է որպեսզի ՀՀ ԱՎԾ-ն առաջնահերթ դարձնի նման փոխարինումը ապագա համագործակցային ծրագրերում:

3.2 www.armstatbank.am- ի վերաբերյալ եզրակացությունները և առաջարկությունները

ՀՀ ԱՎԾ կողմից սահմանված աշխատանքային ծրագրի հիմք ընդունելով կարելի էր ավելի շատ արդյունքներ ստանալ: PX-WEB-ի զարգացման աշխատանքը և Հայաստանի համապատասխան քարտեզի սկզբնաղբյուրի որոնումը դեռևս առկախ վիճակում է, և ես կփորձեմ երկու խնդիրների հետ կապված մի քիչ աշխատել առաջիկա շաբաթներին, սակայն դա կարող է որոշ ժամանակ պահանջել և անմիջական հաջողություն երաշխավորված չէ:

www.armstatbank.am-ի տարածքային և սեռային բաշխվածությունը պետք է գերակայությունների շարքում լինի, ինչպես նշվել է 2016թ. սեպտեմբերին կայացած գործողություն 1.5-ի առաքելության հաշվետվությունում: Նույնիսկ եթե քարտեզը տեղադրվի, այնուամենայնիվ դեռևս առկա է քարտեզներով պատկերագրման միջոցների կամ ինտերակտիվ գրաֆիկների համար համապատասխան տվյալների նշանակալի պակաս:

ՀՀ ԱՎԾ-ն պետք է կառուցի հմտություններ և գիտելիքներ Java-Script-ի և տվյալների հետ աշխատանք կատարելու այլ գործիքների օգտագործման համար, որպեսզի լիարժեքորեն օգտվի www.armstatbank.am/PX-WEB API-ից: Այս կարողությունները մեծապես օգտակար են տվյալների (վարչական) փոխանակման վերաբերյալ ցանկացած ծրագրի համար, որ ՀՀ ԱՎԾ-ն կարող է նախատեսել:

Գործողություն	Վերջնաժամկետ	Պատասխանատու անձ
Պատրաստել սպառողների բավարավածության հետազոտության հիշեցումը	Հնարավորին շուտ	ՀՀ ԱՎԾ – SS աշխատակիցներ
Ղեկավարության համաձայնությունն ստանալ www.armstat.am նոր նավիգացիոն կառուցվածքի համար	Տեսականորեն հաստավեց ՀՀ ԱՎԾ նախագահի հետ հունվարի 20-ին կայացած ամփոփիչ հանդիպման ժամանակ	ՀՀ ԱՎԾ – բոլորը
Ներկայացնել նոր նավիգացիոն կառուցվածք բաժինների ղեկավարներին/առնչվող աշխատակիցներին		ՀՀ ԱՎԾ - տարածման/հաղորդակցության աշխատակիցներ
Իրականացնել նոր գլխավոր էջ www.armstat.am	Տեսականորեն հաստատված է ՀՀ ԱՎԾ նախագահի հետ հունվարի 20-ին կայացած ամփոփիչ հանդիպման ժամանակ – որոշել մեկնարկի օրը	ՀՀ ԱՎԾ - SS աշխատակիցներ
Իրականացնել www.armstat.am-ի նոր նավիգացիոն կառուցվածք	Փորձարկումը մատնանշում է, որ սա հնարավոր է, սակայն պատրաստ եղեք, որ չնախատեսված խնդիրներ կարող են առաջանալ	ՀՀ ԱՎԾ - SS աշխատակիցներ
Պատրաստել մամուլի հաղորդագրություն՝ տեղեկացնելով սպառողներին, որ կայքը շուտով փոփոխվելու է	Նավիգացիոն կառուցվածքը փոփոխելուց առաջ և գլխավոր էջի տեսազգայական փորձարկումից մեկ շաբաթ առաջ	ՀՀ ԱՎԾ - տարածման/հաղորդակցության աշխատակիցներ
Դիտարկել հայտնվող պատուհանով հայտատարության օգտագործումը կայքում	Օգտագործել հայտնվող հայտարարություն կայքում սպառողներին տեղեկացնելու համար, որ կառուցվածքը փոփոխվելու է	ՀՀ ԱՎԾ - տարածման/հաղորդակցության աշխատակիցներ /SS
HELP-ի ներքո տեղեկացնել, թե ինչն է փոփոխվել	Կայքում տեղադրել փաստաթուղթ, որը կբացատրի, որ բովանդակությունը փոփոխությունների է	ՀՀ ԱՎԾ - տարածման/հաղորդակցության աշխատակիցներ /SS

	ենթարկվել, և հիշեցնել սպառողներին, որ նրանք կարող են կապ հաստատել ՀՀ ԱՎԾ աշխատակիցների հետ լրացուցիչ տեղեկությունների/օգնության համար	
Ուսումնասիրել, թե ինչպես Armstatabank.am API-ից տվյալներ հանել և ինտեգրացնել՝ օգտագործելով Java-Script տեխնոլոգիաներ. Օրինակները հասանելի են Հավելված 4-ում	2017թ. օգոստոսից 2017թ. հունիս	ՀՀ ԱՎԾ- SS աշխատակիցներ
Պատրաստել առաջարկություններ/հարցեր www.armstatbank.am-ի հիման վրա պատկերագրումներ կատարելու վերաբերյալ, որը կննքարկվի 2017թ. հունիսին կայանալիք առաքելության ընթացքում	Ոչ ուշ քան 2017թ. ապրիլի վերջում, եթե առաջարկությունները պետք է քննարկվեն 2017թ. հունիսին	ՀՀ ԱՎԾ- SS աշխատակիցներ
Ներառել կայքի/տարածման շարունակական աշխատանքը Համաշխարհային բանկի հետ առաջիկա ծրագրում, կամ այլ համապատասխան ծրագրում	2017թ. հունիս	ՀՀ ԱՎԾ – ղեկավար կազմ/ միջազգային հարաբերությունների հետ աշխատող աշխատակիցներ
Ընդունել և համապատասխանեցնել ապագա համագործակցային ծրագրերը Թվինինգ ծրագրի 1-ին բաղադրիչի շրջանակներում արված առաջարկությունների հետ	Թվինինգի վերջին մասի ընթացքում, 2017թ. երկրորդ կես	ՀՀ ԱՎԾ –ղեկավար կազմ/ միջազգային հարաբերությունների հետ աշխատող աշխատակիցներ
Փոխել www.armstatbank.am-ի հիմքում ընկած CMS-ը և համակարգչային սարքավորումները	2018թ. վերջ	ՀՀ ԱՎԾ – ղեկավարության որոշում
www.armstat.am-ի տեսազգայական դիզայնը փոխարինել նոր արձագանքող դիզայնով՝ օգտագործելով թեմատիկ կողմնորոշմամբ նավիգացիոն կառուցվածք	2018թ. վերջ	ՀՀ ԱՎԾ – SS շխատակիցներ

Հավելված 1. Տեխնիկական առաջադրանք

Տեխնիկական առաջադրանք **ԵՄ Թվինինգ ծրագիր AM/14/ENP/ST/15** **2017թ. հունվարի 17-20**

Բաղադրիչ 1. Վիճակագրական տեղեկատվության տարածման համակարգ

Գործողություն 1.6. Կայքի բարելավում II

0. Բաղադրիչի պարտադիր արդյունքներ և չափանիշներ

Պարտադիր արդյունքներ.

- Վիճակագրական տեղեկատվության տարածման բարելավված համակարգ (2017թ. հուլիս)

Չափանիշներ.

- Պատրաստի վիճակագրական տեղեկատվության տարածման համակարգ (2017թ. հուլիս)
- Մշակված տեղեկատվության տարածման համակարգի ռազմավարություն՝ընդունված Վիճակագրության պետական խորհրդի կողմից (2017թ. հուլիս)
- Սպառողների բավարարվածության հետազոտության արդիականացված, փորձարկված և ՀՀ ԱՎԾ կայքում հրապարակված հարցաթերթ (2017թ. հուլիս)
- Վիճակագրական տեղեկատվության տարածման գծով վերապատրաստված ԱՎԾ անձնակազմ (2017թ. հուլիս)

1. Գործողության նպատակը

- Վերջին առաքելության արդյունքում արված առաջարկությունների և տնային աշխատանքի ստուգողական դիտարկում
- Քննարկումներ, թե ինչպես բարելավել կայքը՝բարձրացնելու համար սպառողների կողմից օգտագործման հարմարավետության աստիճանը
- PC-Axis-ին Armstatbank.am-ի բարելավում

2. Գործողության սպասվող արդյունքը

- Առաջարկություններ կայքի բարելավման վերաբերյալ
- Ավարտին հասցնել Armstat.am կայքում սպառողների բավարարվածության հետազոտության տեխնիկական ասպեկտները
- Ծրագրի ավարտի և ապագայի համար աշխատանքային ծրագիրը սահմանված է

3. Մասնակիցներ

ՀՀ ԱՎԾ

Բաղադրիչի ղեկավարներ

- Պրն Ստեփան Մնացականյան
- Տկն Անահիտ Սաֆյան
- Պրն Վանուշ Դավթյան
- Տկն Նարինե Մուշեղյան

Այլ աշխատակիցներ

- Տկն Սիլվա Ուլուբաբյան
- Տկն Նելլի Մարգարյան
- Տկն Գոհար Նշանյան
- Տկն Ալինա Հունանյան
- Տկն Արմինե Մարտիկյան
- Տկն Լիլիթ Կարապետյան
- Տկն Աիդա Մարտիրոսյան
- Տկն Արմենուհի Առուշանյան
- Տկն Սոնա Շախգելդյան

ԱԵ փորձագետ

Պրն Յեսպեր Էլեմոսե Յենսեն, փորձագետ, Դանիայի վիճակագրություն

Առաքելության ծրագիրը

Ժամանակ	Վայր	Միջոցառում	Նպատակ/մանրամասներ
Երեքշաբթի, կեսօր *(17/1)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ԹՄԽ հետ	Քննարկել շաբաթվա ծրագիրը
Երեքշաբթի, կեսօրից հետո *(17/1)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Իրավիճակի գնահատում և ՇԵ կողմից վերջին առաքելությունից հետո իրականացված աշխատանքի ներկայացում Ընթացիկ առաքելությունից սպասվող արդյունքի ներկայացում ՇԵ կողմից
Չորեքշաբթի, առավոտ *(18/1)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Քննարկում armstat.am կայքի բարելավման և սպառողների կողմից կայքի օգտագործման հարմարավետության աստիճանի բարձրացման վերաբերյալ, ընթացիկ վեբ-հարթակի գնահատում, գլխավոր էջի կառուցվածքի ձևափոխում
Չորեքշաբթի, կեսօրից հետո *(18/1)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Ծրագրի շրջանակներում armstatbank.am կայքի բարելավման համար աշխատանքային քննարկում
Հինգշաբթի, առավոտ *(19/1)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Շարունակական աշխատանքների իրականացում կայքերի բարելավման նպատակով
Հինգշաբթի, կեսօրից հետո *(19/1)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Վերջնական եզրակացությունների, ճանապարհային քարտեզի և առաքելության հաշվետվության պատրաստում
Ուրբաթ, առավոտ *(20/1)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի հետ Չպլանավորված հանդիպումներ	ԱԵ փորձագետների բացահայտումների ներկայացում և ձեռքբերված եզրակացությունների համաձայնեցում Վերջնական պարզաբանումներ ՇԵ փորձագետների հետ, հաշվետվության պատրաստում և ներկայացում ՇԵ ծրագրի ղեկավարին
Ուրբաթ, կեսօրից հետո	ՀՀ ԱՎԾ	Ամփոփիչ հանդիպում ՇԵ	Եզրակացություններ, որոշումներ և դրանց հետևանքները հաջորդ

(20/1)	ծրագրի ղեկավարի հետ	գործողության համար և ՇԵ փորձագետների աշխատանքային ծրագիր

Հավելված 3. Հանդիպումներին մասնակցած անձինք

<u>ՀՀ ԱՎԾ.</u>

Բաղադրիչի ղեկավարներ

- Պրն Ստեփան Մնացականյան
- Պրն Վանուշ Դավթյան
- Տկն Նարինե Մուշեղյան

Այլ աշխատակիցներ

- Տկն Աիդա Մարտիրոսյան
- Տկն Արմենուհի Առուշանյան
- Տկն Սոնա Շախգելդյան

<u>ԹՄԽ թիմ.</u>

- Պիտեր Բոնստեդ Անան Հանսեն, Թվինինգ մշտական խորհրդատու
- Լիանա Աթոյան, ԹՄԽ օգնական
- Անուշ Պողոսյան, ԹՄԽ թարգմանիչ

Հավելված 4. Պատկերագրման առաջարկություններ

Ստորև ներկայացված են առաջարկություններ՝ կապված պատկերագրման համար բազմազան Java-Script դիալեկտների օգտագործման հետ, որոնք կարող են համադրվել www.armstatbank.am-ի տվյալների հետ՝ կիրառելով API և JSON-stat:
Սույն մեթոդաբանության համար որպես օրինակների հիմնական աղբյուր է ծառայում https://github.com/badosa/JSON-stat/wiki/Examples հղումը:

Վեբ հրապարակում PX-Web տվյալների բազայի օգտագործմամբ

Երկրի ինտերակտիվ ներկայացում տարբեր վիճակագրական աղյուսակներով
Սույն պրեզենտացիան, որտեղ օգտագործված են PX-Web API և բաց աղբյուրների պատկերագրման գործիքներ, պատրաստվել է Ֆարոյան կղզիների վիճակագրական գրասենյակի կողմից:



Սկզբնաղբյուր դեմո/ցուցադրական տարբերակը՝ https://hagstovan.github.io/gluggin/
Ծրագիրը հասանելի է՝

- https://github.com/hakimel/reveal.js/
- http://www.highcharts.com/
- https://json-stat.org/

Գրենլանդիայի վիճակագրության վահանակ



Ծրագիրը հասանելի է Git-ից
https://github.com/StatisticsGreenland/statbank2charts

Բնակչության բուրգը՝ Հայասնատի բնակչության տվյալներով



Ադապտացված օրինակ, ի սկզբանե մշակված սպառողի կողմից Իսլանդիայի վիճակագրության PX-WEB API-ի կիրառմամբ

Աղբյուրը և բացատրությունները հասանելի են՝
https://bl.ocks.org/borgar/b952bb581923c9993d68